ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 23 » հունիսի 2015 թվական N 108-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՋՐԱՀԵՂՁՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «բ», «դ» և «զ» կետերի դրույթներով՝ 2015 թվականի ամառային ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներում բնակչության պաշտպանությունը ապահովելու և ջրահեղձման դեպքերը կանխարգելելու նպատակով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հանձնարարել՝

1) «Ախուրյան-Արաքս ջրառ» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի տեղամասի պետին, «Շիրակ» ջրօգտագործողների ընկերության տնօրենին

ա. ամառային ժամանակահատվածում ընկերությունների կողմից սպասարկվող մարզի ջրամբարների տարածքներում սահմանել ուժեղացված շուրջօրյա հերթապահություն,

բ. ջրամբարներին հարող տարածքներում մշտապես իրականացնել սանիտարական գոտու պահպանության համար նախատեսված միջոցառումներ,

գ. արգելել անսարք կամ ինքնաշեն լողամիջոցներով ջրամբարների ջրային տարածք մուտք գործելը.

2) «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղի տնօրենին

ամառային ժամանակահատվածում մարզի ջրային ավազանների սանիտարական վիճակի նկատմամբ սահմանել խիստ հսկողություն.

3) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին

ամառային ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գործող զանգվածային լրատվամիջոցներով ազգաբնակչությանը պարբերաբար իրազեկել ջրային տարածքներում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներին մոտ գտնվող համայնքների ղեկավարներին՝ (համաձայն հավելվածի)

1) համայնքի տարածքում կամ համայնքին մոտ գտնվող ջրային տարածքներում տեղադրել համապատասխան նախազգուշական ցուցատախտակներ.

2) համայնքի ուժերով սահմանել հսկողություն ջրային տարածքներում.

3) ջրահեղձման դեպքերի կանխարգելման նպատակով հանգստի վայրերում՝ հովեկների շրջանում իրականացնել բացատրական աշխատանքներ:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Սեյրան Պետրոսյանին:

Իսկականի հետ ճիշտ է

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 23 Ի ԹԻՎ 108-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՅԻՆ ԱՎԱԶԱՆՆԵՐԻՆ (ՋՐԱՄԲԱՐՆԵՐ, ԼՃԵՐ) ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

Հ/Հ	Համայնքի անվանումը	Ջրավազանի անվանումը
1	Գյումրի	Քաղաքային լողավազաններ, շատրվաններ, ջրավազաններ
2	Ազատան	Ազատանի լիճ
3	Ջաջուռ	Ջաջուռի սելավակարգավորիչ ջրամբար
4	Կրաշեն	Կրաշենի լճակ
5	Ախուրիկ	Ախուրյանի ջրամբար (Ախուրիկի լճակ)
6	Բայանդուր	Ախուրյանի ջրամբար
7	Գետք	Ախուրյանի ջրամբար
8	Երազգավորս	Ախուրյանի ջրամբար
9	Կառնուտ	Կառնուտի ջրամբար
10	Հովիտ	Կառնուտի ջրամբար
11	Բասեն	Կառնուտի ջրամբար
12	Մարմաշեն	Մարմաշենի լճակ
13	Վահրամաբերդ	Վահրամաբերդի լճակ
14	Մարալիկ	Մարալիկի ջրամբար
15	Ձորակապ	Մարալիկի ջրամբար
16	Քարաբերդ	Գյուղամիջյան լճակ
17	Աղին	Ախուրյանի ջրամբար
18	Իսահակյան	Ախուրյանի ջրամբար
19	Լուսաղբյուր	Ախուրյանի ջրամբար
20	Շիրակավան	Ախուրյանի ջրամբար
21	Ջրափի	Ախուրյանի ջրամբար
22	Սառնաղբյուր	Սառնաղբյուրի ջրամբար
23	Ջարիշատ (Երիզակ)	Արփի լճի ջրամբար
24	Բերդաշեն (Պաղակն)	Արփի լճի ջրամբար
25	Գառնառիճ (Եղնաջուր)	Արփի լճի ջրամբար
26	Ջորակերտ (Դարիկ)	Արփի լճի ջրամբար
27	Ծաղկուտ (Լորասար)	Արփի լճի ջրամբար
28	Շաղիկ	Արփի լճի ջրամբար
29	Բավրա	Թավշուտի ջրամբար
30	Թավշուտ	Թավշուտի ջրամբար
31	Սիզավետ	Թավշուտի ջրամբար
32	Ձորաշեն	Ձորաշենի լճակ

33	Սարապատ	Ձորաշենի լճակ
34	Փոքր Մանթաշ	Արհեստական լճակ
35	Վարդաքար	Վարդաքարի ջրամբար
36	Հովտաշեն	Վարդաքարի ջրամբար
37	Հոռոմ	Վարդաքարի ջրամբար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Խ. ՊՈՂՈՍՅԱՆ